Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
11-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Անպարփակ վիշտը հոգու մեջ՝ նա անդադրում դեգերեց օտար ժողովուրդների հայրենիքներում և իմացավ՝ ամենուր աշխարհի բոլոր ծայրերում էլ, վիշտը ***մեկ է***, սերը մեկ: Վսեմափայլ երգիչը, անբաժան ցուպը ձեռքին, ***մախաղն*** ուսն առած, թափառեց աշխարհեաշխարհ և մի օր՝ կյանքի մայրամուտին, թողած օտար ափերը, իմաստնացած փորձով ու ***աշխարհընկալմամբ,*** և հայրենի ծննդավայրը տեսնելու անձկությամբ ***տոգորված*** դարձավ իր հարազատ եզերքը ու անթեղած կարոտը սրտում՝ գտավ հայրական օջախը:

Վաղ առավոտ արշալուսի շքեղահյուս ծիրանու ներքո, քաղցրահնչյուն երգի սիրատոչոր մրմունջով ելավ Արագածի զառիվեր լանջը, ընկղմվեց ծաղիկների մեջ՝ զգլխիչ բույրերով ու թույրերով լի և թրթռուն սրտի ջերմ ***արցունքներով*** ցողվեցին ծաղկաթերթերը: Հետո քայլեց Արաքսի ափով՝ անքթիթ հայացքը խայտացող ***կռհակներին***, ու երանությամբ ըմբոշխնեց մայր գետի անուշ կարկաչը:

Եվ երբ ահագնատես մահը սարսռազդու ժպիտով նայեց նրան՝ պահանջելով հոգին, երգիչը հանդարտ ու անվրդով ասաց.

- Ապարդյուն է ջանքդ. զուր ես փորձում խլել հոգիս. ես այն աշխարհով մեկ սփռել, բաժանել եմ ամենքին, այնպես որ քեզ տալու ոչինչ չի մնացել:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով թույլ տրված կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:
2. Շարահյուսորեն վերլուծի՛ր տեքստում ընդգծված անդամները:
3. Տեքստից դո՛ւրս գրիր անկանոն այն բայերը, որոնք տվյալ ձևերում անկանոնություն չեն դրսևորել:
4. Տեքստից դո՛ւրս գրիր բարդածանցավոր հինգ բառ՝ ընդգծելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով:
5. Առանձնացրո՛ւ սխալ գրված բառերն ու բառաձևերը. յուրաքանչյուրի կողքին գրի՛ր ճիշտ տարբերակը. *սպիեր, իմ դուստրերի կամոք, ուրեմը, ի դեմս քեզ, մի՛թռչիր, դեմ հանդիման, ուխտադրույժ, կանգնեցնել, ժանեկազարդ, հողարկավորություն, տարկետում:*
6. Պարզ նախադասություններով ներկայացրո՛ւ հարակատար դերբայի չորս կիրառություն (ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, ուղիղ խնդիր)՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
7. Գրի՛ր տրված բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *միահեծան, ատոք, երեսփոխան, ապաշավանք, զանգապան:*
8. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքները. *գողգոթայի ճանապարհ, առաջին ջութակ, գորդյան հանգույց, երգ երգոց:*
9. Գրի՛ր շարադրություն՝ «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում: